# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԻՔՈՄՄ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 14 | DEFCON 5, 5.11 Tactical, GK PRO, UF PRO, Mechanix | DEFCON 5, 5.11 Tactical, GK PRO, UF PRO, Mechanix | Տակտիկական բաճկոն-տաբատ ձմեռային ՍՁ Մարտական ձմեռային համազգեստ SNIPER KIT UNIFORM կամ SSJ (SAS SMOCK JACKET) + PANTALONE SNIPER տաբատի հետ (նույն գունավորմամբ) ձևվածքների: Համազգեստը՝ բաճկոն կապյուշոնով և տաբատ, բաղկացած է ռիպստոպ տեսակի, բամբակ, պոլիամիդ, լաիկրա և այլ մանրաթելերի համակցությամբ գործվածքներից, թերմոդինամիկ նյութերից: Հագեցած է մոլլե կախոցային համակարգով: Նախընտրվող արտադրող բրենդային կազմակերպություններ՝ DEFCON 5, 5.11 Tactical, GK PRO, UF PRO, Mechanix: Երեսացու կտորը ռիպստոպ՝ 65% բամբակ, 35% պոլիէսթեր: Քաշը՝ 4,6կգ (L): Ծնկային և արմնկային հատվածները ուժեղացված են, գրպանները՝ բարձրորակ ինքնակպչուններով, կողամասերը կարգավորվող են: Ապահովում է արտաքին շերտի ջրադիմացկունություն 1-3 ժամ տևողությամբ, 1000 ուղղակի շփման դիմացկունություն, չի քորքոտում, չի գունազրկվում (5 բալ), ինչպես նաև ապահովում է ներքին օդափոխություն, վերջույթների շփման հատվածները չի քրտնում, եթե այդ ժամանակ չի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կատարում ֆիզիկական բարձր 1500-5000 կալորիականության ծանրաբեռնվածությամբ շարժումներ: Գույնը մուլտիկամ, կամ մուլտիլենդ գունաքողարկմամբ (D5-1670/SK VI, D5-1670/SK ML կամ D5-1670/SK MC ) : Բաճկոնը կազմված է կանգուն բարձր օձիքից, որը կոճկվում է բարձրորակ YKK շղթայով,կարգավորվող կայուշոնից, կրծքամասից, մեջքամասից և երկար թևքերից, ունի տարբեր տեսակի գործվացքներից կազմված հատվածներ, ըստ համապատասխան նշանակության: Ապահովում է օդափոխություն և մարմնի ջերմակարգավորում (քրտինքի և գոլորշու դուրս բերում) : ՈՒսագոտու, թևերի, արմունկների, թևատակերի հատվածները ունեն ամրացված հատուկ գործվածքներ, որի օգնությամբ ապահովվում է ակտիվ շփումների դիմացկունություն և օդափոխություն: Արմունկների հատվածում առկա են հատուկ պաշտպանիչ ամորտիզացիոն, հակահարվածային, պաշտպանական հատկություններով, փափուկ ներքին ներդիրներ: Թևերին առկա են խոշոր գրպաններ, վրադիր ինքնակպչուններով կամ շղթաներով փակվող, դաստակի հատվածում թևքերը ամրացվում են ինքնակպչուններով, կոճգամերով կամ կոճակներով: Տաբատը՝ նույն կտորից է, զույգ , կարգավորվող ուսագոտիներով, նույնպես բազմաֆունկցիոնալ, բազմաշերտ հատկանիշներ ունի, ջրակայուն է, շփմանը դիմացկուն, օդափոխության կարողությամբ, օժտված է մարմնի տարբեր հատվածներին ավելի հարմարավետ ֆիքսման կարողություններով՝ կպչուն ժապավենով կամ ռեզինով, ծնկի և սրունքի հատվածներում, ունի 8-10 հատ հատուկ գրպաններ տարբեր հատվածներում և տարբեր նշանակության: Ծնկների հատվածում առկա են հատուկ պաշտպանիչ ամորտիզացիոն, հակահարվածային, պաշտպանական հատկություններով, փափուկ ներքին ներդիրներով վահանիկներ: Գործվածքի բազմագույն հատկանիշների շնորհիվ ապահովվում է քողարկելիությունը և կենտրոնացված տեսանելիության շեղումը: Հետնամասում՝ նստատեղի հատվածում կարված բազմաշերտ գործվածքը ապահովում է ավելի քան 5000 շփում: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Փաթեթավորումը և պիտակավորումը գործարանային: Համազգեստի մոդելը Պատվիրատուի կողմից ներկայացված նմուշի չափանիշների նվազագույն համարժեքության: Պատվիրատուի կողմից չափսերի (42/2 - 64/6), (չափսերի եվրոպական սանդղակով՝ (S - XXL) քանակային հաշվարկը Մատակարարին կտրամադրվի պայմանագրի կնքումից հետո: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ЭКОММ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 14 | | | |